Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-126-27.12.2021,25.02.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 150-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Տոկոսների (բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասով սահմանված դեպքերի) մասով եկամտային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 149-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:».

2) 5-րդ մասից հետո լրացնել 5.1-ին մաս՝ հետևյալ *բովանդակությամբ*.

«5.1. Բանկային ավանդի և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանը առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց ստացվող տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 149-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:».

3) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով (բացառությամբ սույն հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով սահմանված դեպքերի) եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով:».

4) 14-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Հարկային գործակալի կողմից վճարվող պասիվ եկամուտները, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց՝ այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում չվճարվելու դեպքում, դրանց նկատմամբ եկամտային հարկը

հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով և ներառվում է 12-րդ ամսվա համար հարկային մարմին ներկայացվող եկամտային հարկի հաշվարկում: Սույն մասի դրույթները չեն վերաբերում բանկային ավանդների դիմաց և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանը առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց վճարվող տոկոսներին:».

5) 14-րդ մասից հետո լրացնել 14.1-ին մաս՝ հետևյալ *բովանդակությամբ*.

«14.1. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք հարկային գործակալ չհանդիսացող անձից ստացվող պասիվ եկամուտները, այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում չստանալու դեպքում, ներառում են դրանց ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող հարկային տարվա եկամտային հարկով հարկման օբյեկտի մեջ, և դրանց նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է *սույն հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափով*:»:

Հոդված 2. Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում «նվազեցում կատարելու» բառերը փոխարինել «եկամտի ստացման իրավունքը ձեռք բերելու» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ, 156-րդ հոդվածի 4-րդ և 158-րդ հոդվածի 2-րդ մասերից հանել «Օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված դեպքերում» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում *պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից*, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերի և 2-րդ հոդվածի: Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերը և 2-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Առաջին ընթերցում

Լրամշակված փարբերակ

Կ-126-27.12.2021,25.02.2022-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 150-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Տոկոսների (բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասով սահմանված դեպքերի) մասով եկամտային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 149-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:».

2) 5-րդ մասից հետո լրացնել 5.1-ին մաս՝ հետևյալ ~~խմբագրությամբ~~ բովանդակությամբ.

«5.1. Բանկային ավանդի և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանը առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց ստացվող տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 149-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:».

3) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով (բացառությամբ սույն հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով սահմանված դեպքերի) եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով:».

4) 14-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Հարկային գործակալի կողմից վճարվող պասիվ եկամուտները, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց՝ այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում չվճարվելու դեպքում, դրանց նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով և ներառվում է 12-րդ ամսվա համար հարկային մարմին ներկայացվող եկամտային հարկի հաշվարկում: Սույն մասի դրույթները չեն վերաբերում բանկային ավանդների դիմաց և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանը առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց վճարվող տոկոսներին:».

5) 14-րդ մասից հետո լրացնել 14.1-ին մաս՝ հետևյալ ~~խմբագրությամբ~~ բովանդակությամբ.

«14.1. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք հարկային գործակալ չհանդիսացող անձից ստացվող պասիվ եկամուտները, այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում չստանալու դեպքում, ներառում են դրանց ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող հարկային տարվա եկամտային հարկով հարկման օբյեկտի մեջ, և դրանց նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է ~~20 տոկոս~~ սույն հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում «նվազեցում կատարելու» բառերը փոխարինել «եկամտի ստացման իրավունքը ձեռք բերելու» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ, 156-րդ հոդվածի 4-րդ և 158-րդ հոդվածի 2-րդ մասերից հանել «Օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված դեպքերում» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը ~~օրվան~~ հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերի և 2-րդ հոդվածի: Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերը և 2-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-126-27.12.2021,25.02.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1	**ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցություն**	**Հոդված 1, 3-րդ կետ**	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով սահմանված 150-րդ հոդվածի 9-րդ մասով առաջարկվող փոփոխությունը հանել՝ ուժի մեջ թողնելով մինչև առաջարկվող փոփոխությունը գործող ձևակերպումը՝ «Գույքի օտարումից հարկային գործակալներից ստացվող ամբողջ եկամուտների մասով (բացառությամբ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված դեպքերի) եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով»:	Չի ընդունվել: Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է ֆիզիկական անձանց կողմից գույքի օտարումից հարկային գործակալ չհանդիսացողներից ստացված եկամուտների մասով դրույքաչափը սահմանել 10 տոկոս: Ֆիզիկական անձը գույքը հարկային գործակալ չհանդիսացող անձանց (օրինակ՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտին կամ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող օտարերկրյա կազմակերպությանը) օտարելու դեպքում (բացառութ-	Չի ընդունվել:

				յամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող ավտոմեքենայի օտարման և կառուցապատող ֆիզիկական անձի կողմից գույքի օտարման դեպքերի) գործող կարգավորումներին համապատասխան՝ եկամտային հարկը հաշվարկում է ընդհանուր սահմանված դրույքաչափով (օրինակ, 2022 թվականի հունվարի 1-ից՝ 21 տոկոս), իսկ նույն գույքը հարկային գործակալին օտարելու դեպքում՝ 10 տոկոս դրույքաչափով, ինչն առաջացնում է անհավասար պայմաններ՝ գործարքի կողմի (գույքը ձեռք բերողի) հարկային գործակալ հանդիսանալով կամ չհանդիսանալով պայմանավորված: Այս առումով նախագծով առաջարկվում է ֆիզիկական անձանց կողմից գույքի օտարումից ստացված եկամուտների (այդ թվում՝ հարկային գործակալ չհանդիսացողներից ստացված եկամուտների) մասով եկամտային հարկը հաշվարկել 10 տոկոս դրույքաչափով:	

2.	**ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցություն**	**Հոդված 1, 5-րդ կետ**	Առաջարկվում է հանել օրենքի նախագծի 1-ին հոդվածով սահմանված 14-րդ մասից հետո լրացվող 14.1-ին մասը: Նախագծի 1-ին հոդվածի 5–րդ մասով առաջարկվող լրացման՝ ֆիզիկական անձը պասիվ եկամուտների հարկման առումով ընկնում է հաշվեգրման մեթոդով հաշվառման դաշտ: Նման լրացման՝ այս փուլում ընդունելու անհրաժեշտությունը որևէ կերպ չի փաստարկվել նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ: Ըստ էության ներկայացված նախագծի հիմնական նպատակը տնտեսվարող սուբյեկտների կողմից ագրեսիվ հարկային պլանավորման, շահութահարկի բազայի նվազեցման դեպքերը կանխելու և հարկային հաշվառման որոշ հարցերի կարգավորման անհրաժեշտությամբ է պայմանավորված: Կառավարության կողմից ներ-կայացված նախագծի	Ընդունվել է մասնակի: Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «5) 14-րդ մասից հետո լրացնել 14.1-ին մաս՝ հետևյալ խմբագրությամբ. «14.1. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք հարկային գործակալ չհանդիսացող անձից ստացվող պասիվ եկամուտները, այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում չստանալու դեպքում, ներառում են դրանց ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող հարկային տարվա եկամտային հարկով հարկման օբյեկտի մեջ, և դրանց նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է սույն հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափով:»: Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ կետի նոր խմբագրության արդյունքում պասիվ եկամուտների	Ընդունվել է մասնակի:

			հիմնավորման մեջ որևէ ձևակերպում չկա, որը վերաբերում է ֆիզիկական անձանց կողմից եկամտային հարկի վճարումից խուսափելու կամ ագրեսիվ հաշվառում վարելու դեպքերի մասով: Ավելին, 14.1-րդ հոդվածով առաջարկվող լրացումը կհանգեցնի նրան, որ որոշ դեպքերում, մասնավորապես պասիվ եկամուտները, այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում չստանալու դեպքում, կհարկվեն 20 տոկոս դրույքաչափով, 10 տոկոս դրույքաչափի փոխարեն: Ուստի, այս դեպքում ֆիզիկական անձանց ստացման ենթակա պասիվ եկամուտների եկամտային հարկի ավելացումը՝ 10 տոկոսից 20 տոկոս ընդունելի չէ և կարող է հանգեցնել ստվերի ավելացման, քանի որ նույնիսկ 10 տոկոսի դեպքում ֆիզիկական անձը հակված է թաքցնել իր	մասով եկամտային հարկը կհաշվարկվի Օրենսգրքի 150-րդ հոդվածով համապատասխան եկամտատեսակի համար սահմանված դրույքաչափով, ինչի արդյունքում կվերանան առաջարկությամբ ներկայացված ռիսկերը: Ինչ վերաբերում է հիմնավորմանը, ապա հիմնավորման մեջ նշված է, որ ընդհանուր առմամբ պասիվ եկամուտների մասով եկամտային հարկի հաշվարկն իրականացվում է հաշվառման դրամարկղային մեթոդով, որի արդյունքում գործնականում հաճախ հանդիպում են եկամտային հարկի վճարումից խուսափելու դեպքեր: Ինչ վերաբերում է ֆիզիկական անձանց ստացման ենթակա պասիվ եկամուտների եկամտային հարկը անփոփոխ՝ 10 տոկոս դրույքաչափով թողնելու առաջարկին, հարկ է նկատի ունենալ, որ Օրենսգրքի 150-րդ հոդվածով ոչ բոլոր պասիվ եկամուտների համար է սահմանված 10 տոկոս դրույքաչափ:	

			ստացած պասիվ եկամուտները: Այդ իսկ պատճառով, առաջարկում եմ 14.1-րդ առաջարկվող լրացումը հանել և այս դեպքում ֆիզիկական անձանց ստացման ենթակա պասիվ եկամուտների եկամտային հարկը թողնել անփոփոխ՝ 10 տոկոս դրույքաչափով: Այս ոլոտում անհրաժեշտ է ոչ թէ հարկային բեռը մեծացնելով տնտես-վարողին բարեխիղճ հարկատու դարձնել, այլ նոր գործիքակազմ կիրառել, վարչարարությունը ավելի արդյունավետ իրագործելու համար:		
3.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1, 2-րդ և 5-րդ կետեր**	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում «հետևյալ խմբագրությամբ» բառերն առաջարկում ենք փոխարինել «հետևյալ բովանդակությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթները: Սույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 1-ին հոդվածի 5-րդ կետում առկա նույնական կարգավորմանը:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ և 5-րդ կետերում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

4	ՀՀ կառավարություն	**Հոդված 4**	Նախագծի 4-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից» բառերն առաջարկում ենք փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: